ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

24 մայիսի 2022 թվական

8-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 4-ՐԴ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 18.00

Հրաչյա Սարգսյան

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել է ավագանու 10 անդամ՝

Արման Բաբաջանյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Մարկոս Հարությունյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,
Արման Անտոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Արմեն Ներսիսյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,
Թեհմինա Վարդանյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,
Տիգրան Գալստյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Լևոն Զաքարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Մանուել Մարգարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Էդգար Զաքարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,
Դիանա Քերոբյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն:

Առաջին հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Բաբաջանյան, խնդրեմ:

Արման Բաբաջանյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, երկու հարց ունեմ: Առաջին հարցս վերաբերում է Աջափնյակ վարչական շրջանի Արզումանյան փողոցի հ.8ա հասցեի վթարային շենքին: Այդտեղ կառուցվել էր նոր շենք, որտեղ նշված հասցեի բնակիչներին պետք է բնակարան տրամադրվեր: Պազվում է, որ կառուցապատողը որոշ բնակարաններ

վաճառել է: Եթե տեղյակ եք, թե ինչպես է լուծվելու այդ բնակիչներին բնակարաններով ապահովելու խնդիրը, խնդրում եմ տեղեկացրեք:

Հրաչյա Սարգսյան

-Խնդիրն այն էր, որ բնակիչները չէին ցանկանում տեղափոխվել այդ շենք՝ տարբեր պատճառաբանություններով: Ըստ վերջնական համաձայնության՝ բոլոր մուտքերի բնակիչները պետք է իրավաբանական ձևակերպումներ կատարեին և տեղափոխվեին: Այս պահի դրությամբ, ըստ փաստաթղթերի, չկան բնակիչներ, որոնց բնակարան չի հասնելու: Սակայն նշեմ, եթե բնակիչները շարունակեն նույն տրամաբանությամբ և հավելյալ պահանջներ ներկայացնեն, վստահեցնում եմ, որ կարող ենք շատ արագ այդ բնակարանները հատկացնել մեր 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչներին:

Պարոն Մաչյանը կներկայացնի բնակիչների հետ հանդիպում եղել է, թե ոչ:

Ստեփան Մաչյան

-Այո, պարոն Սարգսյան, բնակիչների հետ հանդիպել ենք, ձեռք է բերվել գրավոր պայմանավորվածություն տեղափոխության վերաբերյալ, և մեկնարկել է նոտարական գրանցման գործընթացը:

Հրաչյա Սարգսյան

- Հասկանալի է, բայց հարցը վերաբերում էր նրան, որ բնակարաններ կան, որոնք վաճառվել են, և արդյոք հնարավոր է բնակիչներ լինեն, ովքեր կզրկվեն բնակարանից:

Ստեփան Մաչյան

- Պարոն քաղաքապետ, կառուցապատողը վստահեցնում է, որ ինքն ամբողջությամբ կապահովի այն պահանջարկը, որ կա այժմ:

Հրաչյա Սարգսյան

-Նշեմ, եթե տեղափոխման գործընթացը երկարի և բնակիչները համաձայնության չգան, կառուցապատողը չի կարող սպասել: Այսինքն այդ տեղափոխման գործընթացը պետք է շատ արագ կազմակերպվի: Այդ իսկ պատճառով, կարծում եմ, շատ շուտ պետք է որոշում կայացնել և նոտարական գրանցման գործընթացն սկսել:

Արման Բաբաջանյան

- Պարոն քաղաքապետ, երկրորդ հարցս հետևյալն է. ցանկանում եմ իմանալ, արդյոք ունե՞ք հաշվարկ, թե Երևան համայնքը վարչական շրջանների միջոցով կամ այլ ծրագրերով համայնքի միջոցներից բազմաբնակարան շենքերի բնակֆոնդի վրա որքան գումար է ծախսում: Դա վերաբերում է շենքերի տանիքների, մուտքերի, նկուղների վերանորգման աշխատանքներին, որը պետք է իրականացնեն համատիրությունները:

Հրաչյա Սարգսյան

- Կարծում եմ, այդ ծախսերը կազմում են շուրջ 7 մլրդ ՀՀ դրամ, հաշվի առնելով նաև վերելակների և մնացած աշխատանքների ծախսերը:

Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Մարկոս Հարությունյան, խնդրեմ:

Մարկոս Հարությունյան

-Շնորհակալություն, հարցս վերաբերում է վթարային շենքերի բնակիչների և այն մասնավոր կառուցապատողների պայմանավորվածությանը, որոնք ուզում են վթարային շենքի տեղում կառուցել նոր բազմահարկ շենք և տվյալ շենքի բնակիչներին ապահովել բնակարաններով: Ի՞նչ ժամկետում կարող ենք գալ այն պայմանավորվածությանը, որ կառուցապատողը կսկսի բնակիչներին վճարել վարձավճարներ, որպեսզի նրանք դուրս գան իրենց բնակարաններից:

Հրաչյա Սարգսյան

- Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Ստեփան Մաչյանը:

Ստեփան Մաչյան

-Շնորհակալություն հարցի համար, խոսքը երկու շենքերի մասին է՝ Արզումանյան փող. հհ. 10 և 17: Ունենք նախնական պայմանավորվածություն շինարարների հետ, ակնկալում եմ, որ գործընթացը կսկսենք առաջիկա մեկ ամսվա ընթացքում, որը շատ իրատեսական ժամկետ է, սակայն վերջնաժամկետ խոստանալ չեմ կարող, քանի որ ունենք համաձայնեցումների լայն շրջանակ:

Մարկոս Հարությունյան

-Շնորհակալություն, երկրորդ հարցս հնչեցնեմ. ունե՞նք արդյոք ծրագիր մետրոյի նոր կառուցվելիք կայարանի շրջակայքն ավելի բարեկարգ դարձնելու, այնտեղ գտնվող 3-րդ և 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչներին առաջարկներ անելու և նրանց բնակարաններով ապահովելու վերաբերյալ:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, ես կարծում եմ, երբ որ պատրաստ կլինի մետրոպոլիտենի կայարանի կառուցման նախագիծը և կհայտարարվի կառուցապատման մրցույթ, այդ դեպքում կարող ենք բանակցություններ վարել, առաջարկություններ ընդունել և քննարկումներ իրականացնել:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյան, խնդրեմ:

Արման Անտոնյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, առաջին հարցս վերաբերում է համայնքային սեփականություն համարվող գույքին: Աշխատանքային քննարկման արդյունքում պարզվել է, որ վարչությունը (անվանումը չեմ ցանկանում մատնանշել) ժամանակին գնել է X (իքս) գույք: Իմ հարցումների արդյունքում պաշտոնական գրությամբ ինձ պատասխանել են, որ տեղեկություն չունեն այդ գույքի գտնվելու վայրի վերաբերյալ և բացի գնման պայմանագրերից, այլ փաստաթղթեր առկա չեն: Խոսքը 20 մլն դրամ արժողության գույքի մասին է, ինչի մասին տեղյակ են նաև այլ վարչությունների ղեկավարներ: Խնդրում եմ պատասխանել, թե ինչպես պարզել համայնքային սեփականություն հանդիսացող այդ գույքը կա՞, թե ոչ, իսկ եթե չկա, ապա ի՞նչ է արվելու այդ ուղղությամբ:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն Անտոնյան, ընդհանուր առմամբ գործընթացը հետևյալն է. հանրային հատվածի հետ կապված յուրաքանչյուր տարի կատարվում է գույքագրում, իսկ ամեն երեք տարին մեկ՝ վերագնահատում: Եթե այդ շրջանակներում հայտնաբերվում է, որ տվյալ գույքն ամրակցված է, բայց առկա չէ, ապա պարզվում է, թե որտեղ է գտնվում գույքը, որից հետո պետք է քննարկվի վնասի փոխհատուցման հարց՝ գույքը վերադարձնելու համար: Ես մտաբերում եմ, թե խոսքը որ գույքին է վերաբերում: Հանձնարարված էր, որպեսզի գույքագրում իրականացվի, կարծում եմ այդ գործընթացը տվյալ գույքի հետ կապված դեռ չի ավարտվել:

Արման Անտոնյան

-Շնորհակալություն, երկրորդ հարցս հետևյալն է. որպես ավագանու անդամ հարցում եմ արել քաղաքապետարանի աշխատակազմի սպորտի և երիտասարդության հարցերով բաժնի պետին՝ վերջին ամիսների ընթացքում բաժնի կողմից կատարված աշխատանքների, իրականացված բարեփոխման ծրագրերի վերաբերյալ: Քանի որ Դուք տեղյակ եք այդ հաշվետվությունից, կցանկանայի լսել Ձեր գնահատականը:

Հրաչյա Սարգսյան

-Այո, տեղյակ եմ և գնահատում եմ բացասական: Շնորհակալություն, պարոն Անտոնյան:

Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Արմեն Ներսիսյան, խնդրեմ:

Արմեն Ներսիսյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, հարցս վերաբերում է Վարդաշենի վթարային երկու շենքերին. նախատեսվու՞մ է արդյոք ներդրումներ՝ կապված այդ շենքերի հետ:

Հրաչյա Սարգսյան

-Դուք գիտեք, որ քաղաքապետարանը պարբերաբար տարբեր միջոցառումներ է իրականացնում, որպեսզի կարողանա վերաբնակեցնել վթարային շենքերի բնակիչներին, սակայն 2022 թվականի բյուջեով նման հատկացում չունենք: Քանի որ թիմը նոր է ձևավորվում, առաջարկում եմ քննարկումներ ունենալ կառուցապատողների հետ՝ հասկանալու համար, թե ինչպես կարող ենք բարելավել այդ բնակիչների բնակարանային պայմանները:

Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Թեհմինա Վարդանյան, խնդրեմ:

Թեհմինա Վարդանյան

-Շնորհակալություն, ունեմ մեկ հարց. դեռ հունվար ամսին դիմել էի՝ կապված Երևանի կենդանաբանական այգու տարածքի չափագրումների և սահմանների ճշգրտման հետ: Խնդրել էի ևս մեկ անգամ իրականացնել առանց դրոնի չափագրում, որովհետև տուժում են և՛ որոշ բնակիչներ, և՛ համայնքը: Այո՛, կան զավթումներ տարբեր սուբյեկտների

կողմից, և այդ հարցը պետք է լուծվի: Երեք ամիս է սպասում ենք թույլտվության, որ այդ աշխատանքներն սկսվեն: Խնդրում եմ ասել, թե արդյոք սկսվել է չափագրումը, և ի՞նչ ժամկետներում կունենանք վերջնական և ամբողջական արդյունք:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, տիկին Վարդանյան, կենդանաբանական այգու չափագրությամբ զբաղվում է «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ն, ինձ տեղեկացրել են, որ չափագրումն սկսվել է, սակայն այս պահին նոր տեղեկություն չունեմ, ուստի ճշտելուց հետո Ձեզ գրավոր կամ բանավոր կպատասխանենք:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Տիգրան Գալստյան, խնդրեմ:

Տիգրան Գալստյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, երկու հարց ունեմ՝ կապված քաղաքաշինության հետ: Երևան քաղաքում ունենք ջրմուղ-կոյուղու համակարգի արդիականացման խնդիր: Ես բազմիցս բարձրացրել եմ այս հարցը, սակայն ոչ մի ռեալ արձագանք չեմ ստացել: Խորհրդային տարիներին կառուցվել է մոտ 4000 բազմաբնակարան շենք, իսկ քաղաքապետարանի կողմից տրվել է մոտ 400 շենքի շինարարության թույլտվություն, որոնք կառուցվել են, կամ կառուցման ընթացքում են: Ես կարծում եմ, որ ջրմուղ-կոյուղու համակարգը նախատեսված չի եղել այդ քանակի շենքերի սպասարկման համար, և շուտով այդ համակարգում մենք կունենանք ցավալի հետևանքներ: Որքանով տեղյակ եմ, որոշ վարչական շրջաններում կան տարածքներ, որոնք չունեն այդպիսի համակարգեր: Հարցս հետևյալն է. նախատեսվա՞ծ է արդյոք որոշ նախագծեր կամ ծրագրեր իրականացնել այս ուղղությամբ:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն Գալստյան, Ձեր նշած հարցը գտնվում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի իրավասության տիրույթում, սակայն արդեն երկրորդ տարին է, որ քաղաքապետարանը նույնպես տարբեր վարչական շրջաններում անցկացնում է կոյուղու համակարգեր: Այս տարի, եթե չեմ սխալվում, բյուջեով նախատեսված էր անցկացնել մոտ 500 մլն դրամի կոյուղագիծ: Ինչպես նաև տարեսկզբին դիմել էինք Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն, որպեսզի միջնաժամկետ ծրագրերի շրջանակներում կառավարությունը գումար հատկացնի մի քանի վարչական շրջաններում կոյուղու և խմելու ջրի նոր խողովակներ անցկացնելու համար: Այո, Դուք ճիշտ եք նկատել, որ քաղաքում տեղի է ունենում ակտիվ կառուցապատում, և Ձեր նշած խնդրին պետք է պատշաճ ուշադրություն դարձնել:

Տիգրան Գալստյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ: Երկրորդ հարցս վերաբերում է ինքնակամ շինությունների օրինականացմանը: Քաղաքացիների մոտ կարծիք է ձևավորվել, որ քաղաքապետը կասեցրել է այդ գործընթացը: Կցանկանայի պատասխանեք, թե ինչ մոտեցում ունեք այդ հարցին: Կա մի փակուղային հարց ևս.

քաղաքում կան վաղուց կառուցված ինքնակամ բնակելի շինություններ, և այժմ բնակիչները դիմել են քաղաքապետարան՝ օրինականացման համար, սակայն գլխավոր հատակագծում այդ տարածքները նշված են որպես կանաչապատ գոտիներ, ինչն էլ օրենքով թույլ չի տալիս դրանք օրինականացնել: Ինչպե՞ս պետք է լուծվի այդ հարցը, հնարավո՞ր է արդյոք տեղային լուծումներ տալ:

Հրաչյա Սարգսյան

-Ոչ, պարոն Գալստյան, ինձ մոտ նման մոտեցում չկա, ինքնակամ շինությունների օրինականացման գործընթացը կասեցված չէ: Պարզապես որոշ տեխնիկական խնդիրներ կային, որոնք դժվար լուծելի էին, սակայն մոտ ժամանակներում, ես ձեզ վստահեցնում եմ, էական փոփոխություն կտեսնեք: Միայն երկու շաբաթվա ընթացքում 400 դիմումի ենք պատասխանել: Փաստաթղթաշրջանառության նոր համակարգի ներդրման հետ կապված՝ գործընթացն ավելի կարագանա: Ձեր մյուս հարցը վերաբերում է այն տարածքներին, որոնք ՀՀ կառավարության 18.06.2006թ. հ.912 որոշմամբ հնարավոր չէ օրինականացնել: Ես կարծում եմ, որ պետք է քաղաքացիներն սպասեն մինչև դրա վերաբերյալ վերջնական որոշում կունենանք և կհայտարարենք:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Զաքարյան, խնդրեմ:

Լևոն Զաքարյան

-Շնորհակալություն, առաջին հարցս վերաբերում է Երևանի հ.118 մանկապարտեզին. ինձ դիմել են երեխաների ծնողները՝ մանկապարտեզի բակն ասֆալտապատելու խնդրանքով, և արդյոք վերանորոգման աշխատանքներ այնտեղ նախատեսված են, թե ոչ:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն Զաքարյան, Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարն արդեն դիմել է գրությամբ՝ նախագիծ պատվիրելու համար, կարծում եմ գործը գտնվում է նախագծման փուլում:

Լևոն Զաքարյան

-Շնորհակալություն, հաջորդ հարցս վերաբերում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Անդրանիկի փողոցի հ.108/10 հասցեում տրված շինարարության թույլտվությանը, ինչի արդյունքում մայթը և գազոնները նեղացել են: Ուզում եմ հասկանալ, արդյոք ճիշտ էր այդտեղ շինթույլտվություն տալը:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն Զաքարյան: Որքանով ես տեղյակ եմ, կառուցապատողն այդ տարածքը նորից բերել է նախկին տեսքին: Կարծում եմ նույն տարածքի մասին ենք խոսում, կճշտենք և կտեղեկացնենք:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Մանուել Մարգարյան, խնդրեմ:

Մանուել Մարգարյան

-Պարոն քաղաքապետ, հարցս վերաբերում է ինքնակամ շինությունների օրինականացմանը: Ինչպես գիտենք, մինչև 2021 թվականը դիմած քաղաքացիները պետք

է վճարեն հին կադաստրային արժեքով, սակայն, քանի որ դիմումների քանակը մեծ է, վարչարարության ժամկետները խախտվել են, և բնակիչները մտահոգված են, արդյոք, ենթադրենք երկու տարի հետո, օրինականացման որոշում ունենալու դեպքում նրանք կարո՞ղ են հին կադաստրային արժեքով վճարել, թե ոչ:

Հրաչյա Սարգսյան

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի տեղակալ Արամ Մարտիրոսյանը, խնդրեմ:

Արամ Մարտիրոսյան

-Եթե դիմումները տրված են եղել մինչև 2021 թվականի հունվար ամիսը, այդ դեպքում, անկախ նրանից, թե վարչական ակտը երբ կկայացվի, վճարումները կատարվելու են նախկին սակագներով:

Հրաչյա Սարգսյան

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Էդգար Զաքարյան, խնդրեմ:

Էդգար Զաքարյան

-Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, ինձ հետաքրքրում է շինթույլտվությունների ձգձգման հարցը: Քաղաքացին դիմումը մուտքագրելուց հետո ծանուցում է ստանում, որ պատասխանը կստանա 11 օրում, բայց հաճախ այն ուշանում է մինչև 3, 4 կամ 6 ամիս: Ի՞նչ աշխատանք է տարվում այդ հարցը կարգավորելու ուղղությամբ: Երկրորդ հարցս վերաբերում է «Կանազ» մշակույթի կենտրոնին: Քանի որ մինչ այժմ այնտեղ ոչ մի ներդրում չի արվել, ուզում եմ հասկանալ՝ աշխատանք կատարվու՞մ է շենքը հետ վերցնելու ուղղությամբ, կամ խնդրենք շենքը վերցնողին, որպեսզի ներդրումներ կատարի:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, պարոն Զաքարյան, ես Ձեզ վստահեցնում եմ, որ չկա դիմում, որին 5-6 ամիս պատասխան չի տրվել, եթե գիտեք կոնկրետ դեպք, կարող եք ասել, կարող է 5-6 նման դեպք լինի, բայց համատարած բնույթ չի կարող կրել: Միգուցե քաղաքացուն չի բավարարել պատասխանը, կամ հավելյալ տեղեկություն կամ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտություն է եղել: Այլ բան է, երբ 6 ամիս է տևել, մինչև քաղաքացին բոլոր գերատեսչություններով անցնելուց հետո ստացել է թույլտվություն:

«Կանազ» մշակույթի կենտրոնի հետ կապված հարցն առաջարկում եմ քննարկել խմբակցության նիստում: Շենքը հետ վերցնելու հետ կապված՝ քաղաքապետարանում քննարկում չի եղել, բայց համամիտ եմ, որ դա այդպես երկար ձգվել չի կարող:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Դիանա Քերոբյան, խնդրեմ:

Դիանա Քերոբյան

-Հարցս վերաբերում է Երևանյան լճի մաքրման աշխատանքներին՝ ո՞ր փուլում են դրանք և որքա՞ն են շարունակվելու:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, կարող եմ ասել, որ Երևանյան լճի մաքրման նախապատրաստական աշխատանքներն սկսել էինք դեռ 2020 թվականից: Լճի տարածքում աճած եղեգները դեռ 2021թ-ին ցողել էինք համապատասխան նյութով, որպեսզի նրանց 2 մետրանոց արմատային համակարգը չորանար: Այս պահի դրությամբ լճի տարածքի եղեգները մաքրված են, այնտեղ կա կուտակված աղբ, հայտարարվել է մրցույթ, կայանալուց հետո այն նույնպես կմաքրվի: Ասեմ նաև, որ բարեկարգում ենք լճի մի ափամերձ տարածք, որպեսզի այն դարձնենք հանգստի գոտի:

Դիանա Քերոբյան

-Շնորհակալություն, հաջորդ հարցս հետևյալն է. սեփականատերը ցանկանում է դիմել մասնավոր տարածքից դեպի փողոց ուղի ունենալու համար, նրանից պահանջել են չափագրում կատարել, սակայն նշված տարածքը համայնքային է, որը զավթված և ցանկապատված է այլ քաղաքացիների կողմից, և չափագրում կատարելու հնարավորություն չկա, ինչպե՞ս պետք է վարվել այդ դեպքում:

Հրաչյա Սարգսյան

-Շնորհակալություն, տիկին Քերոբյան, եթե կա նման դեպք, ես առաջարկում եմ ուսումնասիրել կոնկրետ դեպքը և հասկանալ, թե ինչ լուծում կարելի է տալ:

Շնորհակալություն, ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի անդամներ, հարգելի գործընկերներ, Երևանի ավագանու 8-րդ նստաշրջանի 4-րդ նիստը հայտարարում եմ փակված: Շնորհակալություն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կազմեց՝ Ա.Գևորգյան